# ՋՈՆ ՄՅՈՒՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

*International Spanish Academy*
*California PBIS Coalition Silver Award*
*Campaign for Business & Education Excellence (CBEE) Honor Roll 2015*
*California Distinguished School*
*Title I Academic Achieving School*
**912 S. Chevy Chase Drive Glendale, CA 91205**
**Phone: 818 241-4848 Fax: 818 241-1058**
**www.johnmuirelementary.net**


## *Բարի գալուստ ուսումնական նոր տարեշրջան:*

*Այս ձեռնարկը պարունակում է կարևոր տեղեկություններ մեր դպրոցի մասին: Ժամանակ տրամադրեք և վերանայեք դպրոցական այս գրքույկի տեղեկություններ:*

*Մենք ակնկալում եմ, որ միասնական աշխատանքով կերտելու ենք ուսումնական մի նոր "Muiraculous" -սքանչելի տարի , որը մեր աշակերտների համար կլինի ոգևորությանբ և հնարավորություններով լի:*

Մյուրի անձնակազ

**<u>Գրասենյակի անձնակազմ</u>**

| | |
|---|---|
| Տիկ. Զավալա | Տնօրեն |
| Տիկ. Վ. Նազարյան | Տնօրենի օգնական |
| Տիկ. Հ. Գինոսյան | Քարտուղարուհի |
| Տիկ. Օ. Թումանյան | Գործավար |
| Տիկ. Մ. Բորհա | Առողջապահության գործավար |
| Պրն. Տրուհիլյո | Գլխավոր հավաքարար |

## Ջոն Մյուր տարրական դպրոցի առաքելության հայտարարագիրը

*Ջոն Մյուր տարրական դպրոցի աշխատակազմը համագործակցությամբ՝ աշակերտների, ընտանիքների և համայնքի, ապահով և ուսումնապես բարենպաստ միջավայր է ապահովում աշակերտների համար և պատրաստում նրանց ապագայի անվերջ փոփոխվող պահանջները դիմակայելու համար: Մեր աշակերտները ուսումնական բարձր առաջադիմություն են ձեռք բերում իրենց համագործակցության, տրամաբանության, հաղորդակցության և նորարարության շնորհիվ՝ դառնալով իրական աշխարհի խնդիրներ լուծողներ:*

## Ջոն Մյուր տարրական դպրոցի
### տեսլականը

*Մյուրը բազմազգ համայնքային ներառական դպրոց է, խրախուսելու յուրաքանչյուր աշակերտի իր լիարժեք պոտենցիալին հասնելու: Մենք ուսուցում ենք մատակարարում՝ հոգատար, անվտանգ, ոգեշնչող և առողջ միջավայրում, համապատասխանորեն բավարարելու յուրաքանչյուր աշակերտի կարիքները իր ընտանիքի և համայնքի հետ համատեղ:*

# Ջոն Մյուրի
# Ամենօրյա ծրագիր
# 2020/2021

| Անցումային մանկապարտեզ | Զանգը կհնչի | Դասավանդումը Սկսվում է | Արձակում |
|---|---|---|---|
| M, T, Th, F | 8:10 | 8:15 | 12:39 |
| չորեքշաբթի | 9:10 | 9:15 | 12:39 |

| Մանկապարտեզ | Զանգը կհնչի | Դասավանդումը Սկսվում է | Արձակում |
|---|---|---|---|
| M, T, Th, F | 8:10 | 8:15 | 12:49 |
| չորեքշաբթի | 9:10 | 9:15 | 12:49 |

| 1, 2, 3 դաս. | Զանգը կհնչի | Դասավանդումը Սկսվում է | Արձակում |
|---|---|---|---|
| M, T, Th, F | 8:10 | 8:15 | 2:20 |
| չորեքշաբթի | 9:10 | 9:15 | 2:20 |

| 4, 5, 6 դաս. | Զանգը կհնչի | Դասավանդումը Սկսվում է | Արձակում |
|---|---|---|---|
| M, T, Th, F | 8:10 | 8:15 | 2:40 |
| չորեքշաբթի | 9:10 | 9:15 | 2:40 |

### Կարճօրյա արձակման ժամերը

| | |
|---|---|
| Անցումային մանկապարտեզ | 11:51 |
| Մանկապարտեզ | 12:01 |
| 1, 2, 3 դաս. | 12:1 |
| 4, 5, 6 դաս. | 12:31 |

### Դպրոցի գրասենյակի ժամերը

**7:30 – 4:00**
**երկուշաբթի-ուրբաթ**

**խաղադաշտի հսկողությունը սկսում է ժամը 7:30-ին**

**Հեռախոս՝ 818 - 241 - 4848**
**Ֆաքս՝ 818 - 241 - 1058**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Հաջորդ էջերում բոլոր տեղեկությունները դասակարգված են այբենական կարգով:**


**ԷՋ 5**

Բացակայություններ դպրոցից
Ուսումնական առաջադիմության թերթիկ (Report Card)
Դպրոց ժամանման և արձակման ժամեր
Հաճախումներ
Դպրոցի վերամուտի երեկո
Ուսուցման րոպեների կուտակում - "BankingDay"
Հեծանիվներ/սահատախտակ
Տարեդարձներ և դասարանային խնջույքներ

**ԷՋ 6**

Գրքերի վաճառք
Երեխայի խնամատարության ծրագիր. Վաղ շրջանի կրթության և կրթության երկարաձգված ծրագիր (EEELP)
Բջջային հեռախոսներ (սեփական և էլեկտրոնային ազդանշանային սարքավորումներ)
Երգչախումբ
Քաղաքավարության կանոններ
Դասարանային խանգարումներ
Կարգապահության կանոններ/Դպրոցի կանոններ
- Կարգապահության փիլիսոփայություն

**ԷՋ 7**

Կարգապահության կանոններ/Դպրոցի կանոններ- շարունակություն
- Վարքի ականկալիքներ դասերից առաջ և հետո
- Կարգապահության կանոններ/Դպրոցի կանոններ- շարունակություն
- Դասաժամերից առաջ/հետո, վարքի դպրոցի ակնկալելիքներ
- Խաղադաշտի հսկողություն
- Դրական ազդեցություններ
- Կանոններ կռվարարության դեմ
- Խախտումների հետևանքներ
- Սեռական ոտնձգություններ/ Կռվարարության կանոններ

Կրթաշրջանի անգլերեն լեզվի խորհրդատվական հանձնախումբ (DELAC)
էլեկտրոնային նամակներ
Արտակարգ իրավիճակների անվտանգություն ծրագիր

**ԷՋ 8**

Արտակարգ իրավիճակների անվտանգություն ծրագիր- շարունական
Անգլերեն լեզվի խորհրդատվական հանձնախումբ (ELAC)
Անգլերեն լեզվի զարգացման ծրագրեր (ELD)
Գիտակրթական շրջագայություններ
FLAG` Իսպաներենի լեզվի ծրագիր

**ԷՋ 9**

Սննդի ծառայություններ
Հիմնադրամ
Շնորհալիների և տաղանդավորների ուսուցում- G.A.T.E. (Gifted and Talanted Education)
Տնային աշխատանք
- Նպատակ
- Հիմնական սկզբունքներ
- Ծնողի պատասխանատվություն
- Աշակերտի ծրագրավորման գրքույկ և տնային աշխատանքի թղթապանակ

Ինքնուրույն ուսուցում

**ԷՋ 10**

Ինքնուրույն ուսուցում
Ուսումնական հիմունքներ
Ուսուցման առաջնորդող թիմ (ILT)
Գործիքային երաժշտություն
Գրադարան
Կորած և գտնված իրեր
Դեղեր
Բաց դռների օր
Ծնողական խորհրդակցություններ
Ծնողի այցելություն
Անձնական իրեր
Լուսանկարվելու օր
Ֆիզիկուլտուրայի ուսուցման ծրագիր (P.E.)
Ֆիզիկուլտուրայի ուսուցման ուղեցույցներ

**ԷՋ 11**

Ֆիզիկուլտուրայի ուսուցման ծրագիր (P.E.) - շարունակություն
Ֆիզիկուլտուրայի ուսուցման ուղեցույցներ
Հոգեբան
PTA-ի անդամներ
Կարմիր ժապավենի շաբաթ
Հաջորդ դասարանը չփոխադրվել
Ռոբոտիկների ակումբ
Ապահովություն և անվտանգություն
Ամսվա գիտունը և քաղաքացին
Դպրոցի հաշվետվության զեկուցագիր (SARC)
Դպրոցի հեռախոսային պատգամների ծրագիր

**ԷՋ 12**

Դպրոցի հեռախոսային պատգամների ծրագիր – շարունակություն
Դպրոցական խորհուրդ (SSC)
Եզակի ծրագիր աշակերտի առաջադիմության համար (SPSA)
Վեցերորդ դասարանի միջոցառումներ
Սոցիալական տեղեկատվություն/ կայքէջեր
Ոգեորման օրեր
Աշակերտական խորհուրդ
Ուշացումներ
Հեռախոսներ
Հեռախոսային պատգամներ
Քննություններ

**ԷՋ 13**

Քննություններ) -շարունակություն
Դասագրքեր
Հինգշաբթի օրվա թղթապանակ
Երթևեկության գոտի
Բողոքի համընդհանուր գործընթաց
Համազգեստի և զգեստավորման համընդհանուր կանոններ

**ԷՋ 14**

Համընդհանուր կանոն և համազգեստի կանոններ - - շարունակություն
Այցելուներ և կամավորներ
Բարօրության կանոններ
Դեղին ժապավենի շաբաթ

**Բացակայություններ դպրոցից**

Մեզանից պահանջվում է աշակերտի հարգելի բացակայության դեպքում ծնողից կամ խնամակալից բացատրական երկտող պահանջել: Հարկավոր է 3 օրերի ընթացքում զեկուցել և պարզել հարգելի բացակայությունը, այլապես դրանք դասերից փախուստ կհամարվեն: Դուք կարող եք հարգելի դարձնել ձեր երեխայի բացակայությունը կատարելով հետևյալը՝

-այցելել մեր կայքէջը (նախընտրելի տարբերակ) www.johnmuirelementary.net և էլ. փոստով նամակ ուղարկել մեր քարտուղարուհուն՝ Հիլդա Գինոսյանին, ձեր երեխայի բացակայությունը հարգելի դարձնելու համար:

– երբ ձեր երեխան բացակայությունից հետո դպրոց է վերադառնում, ապա ծնողը կամ խնամակալը բացատրական երկտողում պետք է նշի՝ աշակերտի անունը, ամսաթիվը և բացակայության պատճառը:

-զանգահարել դպրոցի գրասենյակ(818) 241-4848

հեռախոսահամարով:

**Ըստ նահանգային օրենքի հարգելի են համարվում հետևյալ բացակայությունները. հիվանդություն, բժշկական դարմանումներ, ծանր կորստ և որոշ օրինական պարտականություններ: Ընտանեկան արձակուրդները, կրոնական տոները /հանձնառությունները, կամ անձնական գործերը անհարգելի բացակայություններ են համարվում:** (Տես Ինքնուրույն Ուսուցման բաժինը): Այն աշակերտները, որոնք կշարունակեն բացակայել, կուղղորդվեն Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի հաճախումների քննարկման բաժանմունք (SARB), ուր լրացուցիչ քայլեր կձեռնվեն: Ծնողներին կրթաշրջանից 4 հաջորդական նամակներ կուղարկվեն փոստով: Դրանք եռօրյա, 5-ից 9-ը օրերի, 10-ից 14 օրերի բացակայության նամակներն են, իսկ 4-րդը գրանցված օրերի բացակայության վերջինը՝ 18 օր բացակայելու պարագայում, որը զգուշացման նամակ է:

**Ուսումնական առաջադիմության վիճակացույց**

Տարվա ընթացքում, երեք անգամ ուսումնական առաջադիմության վիճակացույց է տրվում: Ուսումնական առաջադիմության վիճակացույցը հիմնված է դասարանային մակարդակով չափանիշերին տիրապետելու կարողության հիմունքների վրա: Ցանկացած ժամանակ կարելի է ծնող-ուսուցչական խորհրդակցական ժողով գումարել աշակերտի առաջադիմությունը քննարկելու համար: Վիճակացուցները տուն են ուղարկվում գնահատման ժամանակաշրջանից վեց (6) շաբաթ առաջ, որպեսզի ծնողները տեղեկանան իրենց զավակի անբավարար դասարանային չափանիշեր մասին, և եթե նա բավարար առաջադիմություն չցուցաբերի, ապա հնարավոր է, որ անբավարար նիշ ստանա!

**Արագացված ընթերցանություն (AR) ընթերցանության ծրագիր**

Արագացված ընթերցանությունը համկարգչի ընթերցանություն է, որը գնահատում է աշակերտի ընթերցած նյութի ըմբռնումը: Աշակերտները իրենց մակարդակի համեմատ գրքեր են ընտրում ինքնուրույն ընթերցանության համար, դպրոցի կամ հանրային գրադարանից, կարդում են գիրքը և ապա գրքի վերաբերյալ «ստուգողական» հանձնում դպրոցում: Բոլոր 1-6-րդ դասարանների աշակերտները AR քննություններ են հանձնում տարվա ընթացքում: Ուսուցիչները նպատակներ են մշակում աշակերտների համար, և այն աշակերտները, որոնք հասնում կամ գերազանցում են այդ նպատակներին հրավիրվում են տարեվերջի հատուկ միջոցառմանը:

**Դպրոց ժամանման և արձակման ժամեր**

Խնդրվում է կարդալ ամենօրյա ծրագրի **բաժինը, այս տեղեկագրքույկի** 2-րդ էջում: Աշակերտները չպետք է ժամը 7:30-ից առաջ դպրոցում լինեն, այդ ժամին հսկողությունը չկա: Մի իջեցրեք աշակերտներին նախքան 7:30-ը: Դա ապահով չէ: Զանգահարեք EEELP-ի (երկարաեցված) ծրագրի ներկայացուցչին (818)241-7562 հեռախոսահամարով, եթե երեխայի խնամատարության կարիք ունեք: Դպրոցից արձակվելուց անմիջապես հետո պետք է աշակերտին վերցվել դպրոցից: Եթե աշակերտները չվերցնեն այն ժամին, երբ գրասենյակը փակվի այդ օրվա համար, Գլենդեյլի ոստիկանության բաժինը կկապվի ձեր հետ երեխային վերցնելու ւ համար:

**Հաճախումներ**

- Աշակերտները պետք է դպրոց հաճախեն ամեն օր, եթե հիվանդ չեն (տեսեք դպրոցական բացակայությունները):
- Աշակերտները ժամանակին շարքի մեջ պետք է լինեն.
  - ժամը 8:10-ին՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ օրերին, դասավանդումը սկսվում է ժամը 8:15-ին:
  - ժամը 9:10-ին՝ չորեքշաբթի օրերին, դասավանդումը սկսվում է ժամը 9:15-ին:
- Ուշացած աշակերտները պետք է այցելեն դպրոցի գրասենյակ և ստորագրեն ուշացողների ցանկը:

**Դպրոցի վերամուտի երեկո**

Սա դպրոցի առաջին ամսվա ընթացքում տեղ գտած մի միջոցառում է, ուր ծնողները հնարավորություն ունեն իրենց երեխայի ուսուցչին ծանոթանալ և ուսումնական տարվա իրենց դասարանային ծրագրին: Այս երեկոն ծնողների համար է միայն:

**Ուսուցման րոպեների կուտակում-"Banking Day"**

Չորեքշաբթի օրեին դասերը կսկսվեն առ. ժամը 9:15-ին: Ըստ Կալիֆորնիա նահանգի ուսումնական հրամանագիր, ուսուցողական րոպեներ «խնայվում» են, որպեսզի ընդհանուր ծրագրավորման ժամանակ ստեղծվի աշխատակազմի համար: Այս ժամանակամիջոցին աշխատակազմը զբաղվում է դասարանների համար ուսուցողական ծրագրեր կազմելով, որպեսզի բարելավեն ուսուցումը և հսկեն աշակերտների առաջադիմությանը:

**Հեծանիվներ/սահատախտակներ (Skateboards)**

Ծնողների թույլատվությամբ, 4-6-րդ դասարանի աշակերտները կարող են հեծանիվով դպրոց գալ, իրենց վրա վերցնելով անձնական պատասխանատվություն: Նահանգային օրենքը պարտադրում է հիծանվորդներին իրենց գլուխը պաշտպանել հատուկ սաղավարտով (helmet): Մենք խրախուսում ենք ծնողներին, որ աշակերտներին ծանոթացնեն հեծանիվ վարելու անվտանգության կանոնների/օրենքի հետ և վտանգից խուսափելու համար ընտրեն դպրոց գալու և վերադառնալու ամենաապահով ճանապարհը: Յուրաքանչյուր հեծանիվ, ապահովության համար, պետք է կողպվի և նշանակված տեղում կանգնեցվի: Աշակերտները պետք է քայլելով իրենց հեծանիվների վայր գնան: Աշակերտները ՉՊԵՏՔ Է իրենց սահատախտակները (skateboards), roller skates, scooters, skate shoes կամ roller blades բերեն դպրոց կամ դպրոցի տարածքում իրենց մոտ ունենան դրանք: Երեխաները ՉԵՆ կարող որևէ ժամանակ սահատախտակները(skateboards) , roller skates, scooters, skate shoes կամ roller blades քշել/հագնել դպրոցում:

## Տարեդարձներ և դասարանային խնջույքներ

Յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա ընթացքում երկու դասարանային տոնակատարություն  է թույլատրում: Դրանք կարող են լինել տոն, տարվա ավարտի տոնակատարություն կամ որևէ այլ տոն: Ուսուցիչը ծնողներին ուղեցույցներ կտա ընդունելի կերակուրների, զվարճանքի և ծնողների մասնակցության ակնկալիքների վերաբերյալ:

## Տարեդարձներ չեն տոնվի դպրոցական ժամերի ընթացքում

Սա իր մեջ ներառում է TK-6 բոլոր դասարանները: Դուք կարող եք պատվել ձեր երեխայի ծննդյան օրը նվիրելով համապատասխան իրեր, ինչպիսիք են մատիտները, գրքերը կամ պիտակները կամ ձեր ժամանակը նվիրել դասարանին: Խնդրում ենք ստուգեք ձեր երեխայի ուսուցչի հետ դասարանային կարիքների մասին: Ոչ մի տեսակի իրեր՝ սննդի (cupcakes, բլիթներ, քաղցրավենիք, պայուսակներ) կամ խաղալիքների չի թույլատրվում բերել դպրոց:

## Գրքերի վաճառք

Ծնողա-ուսուցչական (PTA) կազմակերպությունը հյուրընկալում է տարեկան Scholastic Book Fair տոնավաճառը: Ստուգեք ձեր զավակի հինգշաբթի օրվա թղթապանակը կամ Peachjar-ը, օրերի և ժամերի մասին տեղեկանալու համար:

## Երեխայի խնամատարության ծրագիր (ASES)

***Դասաժամերից հետո ուսումնական և ապահով/Վաղ շրջանի կրթության և Կրթության երկարաձգված օրվա ծրագիր* (EEELP)**

ASES-ը տրամադրում է վերահսկված ծրագրեր՝ արվեստի, ձեռքի աշխատանքների, սեղանի խաղերի, ֆիզիկական զարգացման, կազմակերպված խաղերի, տնային աշխատանքների օգնության և թմրանյութերի չարաշահման դեմ պայքարի և ինքնավստահության բարձրացման համար: Սննդարար սնունդ ներ են մատակարարվում: Դրանք մատչելի են դասաժամերից հետո մինչև ժամը 5:45, երկուշաբթից-ուրբաթ, երբ դպրոցը բաց է: Այս ծառայությունները շաբաթական վճարով են: Տեղեկությունների համար կարող եք զանգահարել Գլենդել հանրային դպրոցների կրթաշրջան՝ (818) 241-3111 հեռախոսահամարով:

## Բջջային հեռախոսներ

**(ունենալ և օգտագործել ազդանշանային սարքավորումներ)**

Ըստ վարչական կանոնների, աշակերտները կարող են դպրոցական օրվա ընթացքում իրենց մոտ էլեկտրոնային ազդանշանով սարք ունենալ: Էլեկտրոնային ազդանշանով սարքը կարելի է գործածել դպրոցին առնչվող միջոցառումների ժամանակ, կամ դպրոցի աշխատակազմի վերահսկման ներքո: Էլեկտրոնային ազդանշանով սարքը կարելի է օգտագործել դպրոցին առնչվող արտակարգ իրավիճակի պարագաներում և տնօրենի արտոնությամբ, կամ առողջական նպատակների համար: Թեև թույլատրելի է այդպիսի սարք դպրոց բերել, **սակայն դա պետք է անջատված պահել և աշակերտները չեն կարող սարքը դասարանում, դասամիջոցին կամ ճաշի ժամանակ օգտագործել:** Վարչակազմը/դպրոցը պարտականություն չեն ստանձնում այդպիսի սարքերի վնասի, կորստի կամ գողության համար: Եթե այսպիսի սարքի օգտագործումը պատճառ հանդիսանա դպրոցական աշխատանքների խանգարմանը, ապա դա կբռնագրավվի և կվերադարձվի աշակերտի ծնողին կամ խնամակալին: Այս սարքերի օգտագործումը կամ ձանգի ձայնը, դպրոցական ժամերին կամ աշխատանքների ընթացքում համարվում է դպրոցական աշխատանքների խանգարում, և ենթակա է կարգապահական գործողությունների: Այս օրենքի սահմաններում, աշակերտի էլեկտրոնային ազդանշանով սարքի կիրարումը չի սահմանափակվի, եթե նրա առողջության համար  կօգտագործվի: Աշակերտը, որը կարիք ունի իր մոտ ունենալ կամ օգտագործել սարքը, անհրաժեշտ առողջական կարիքների համար, հիմնական կամ ձևավորված ապացույց տեղեկագիր պետք է ներկայացնի, լիազորված բժշկից կամ վիրաբուժից, փաստելու սարքի սեփականության և սահմանափակ գործածության կարևորությունը իր առողջության համար: Այն աշակերտները, որոնք կխախտեն վարչական օրենքը, կզրկվեն իրենց ազդանշանով սարքից, դպրոցի պաշտոնյաները կվերցնեն սարքը և կվերադարձնեն  աշակերտի ծնողին կամ խնամակալին:

## Երգչախումբ

Դասարաններից ընտրված աշակերտները կարող են մասնակցել երգչախմբին: Ծրագիրը ղեկավարում և վրահսկվում է մեր երգչախմբի ղեկավարը: Պարապմունքներն անցկացվում են շաբաթական մեկ անգամ՝ներկայացումներ տալով ուսումնական տարվա ընթացքում:

## Քաղաքավարության կանոններ

Ուսումնական խորհուրդը հանձնառու է պատշաճ ուսումնական և վարչական գործընթաց պահպանել դպրոցում և կրթաշրջանում, այն զերծ պահելով պառակտումներից, կանխել չթույլատրվող անձանց մուտքը դպրոցի և կրթաշրջանի տարածք: Կրթաշրջանի աշխատակիցները իրենց պաշտոնակիցների, աշակերտների, ծնողների և համայնքի անդամների հետ կվերաբերվեն հարգանքով և փոխադարձաբար հարգանք կակնկալեն նրանցից: Կանոնները նպատակադրված չեն որևէ անձի զրկել իր ազատությունից, այլ միայն հնարավորության սահմաններում ապահովել աշխատանքային միջավայր և մեր աշակերտներին և աշխատակազմին զերծ պահել ոտնձգություններից: Որպեսզի դրական կերպարների օրինակներով կարողանանք տարբերություն ստեղծել մեր աշակերտների համար այս կրթշրջանում, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը ակնկալում է քաղաքավարի և դրական հաղորդակցություն: Կրթաշրջանը չի հանդուրժում վարքագծի կոպիտ, անհոգատար, կտրուկ կամ անզգա, փոփոխամիտ, թշնամական կամ ագրեսիվ արարք, կամ բարձրաձայն, անպարկեշտ և վիրավորական խոսելաձև: Կրթաշրջանը ցանկանում է համագործակցող աշխատակազմ, աշակետներ և ծնողներ ունենալ: Կրթաշրջանի անձնակազմը կվերապատրաստվի ճանաչելու և միջոցներ առնելու այսպիսի վարքագծերը դեմակայելու, որոնք պատճառ են դառնում վարչական կանոնների խախտման: Աշխատողները, աշակերտները և ծնողները կտեղեկանան այս կանոնների մասին և պատշաճ միջոցներ կտրամադրվեն անդրադառնալու անքաղաքավարի արարքներին:

## Համայնքային համաժողովներ

Դպրոցի հաղորդակցությունը և թափանցիկությունը բարձրացնելու և դպրոցի կարիքներին անդրադառնալու համար մենք հրավիրելու ենք Մյուրի համայնքային համաժողովներ: Ժողովները հյուրընկալվելու են առավոտյան և երեկոյան ժամերին, որպեսզի

հարմարությունները ստեղծենք աշխատող ծնողների համար: *Մյուրի համայնքային համաժողովները* բաց են բոլոր ընտանիքներին և աշխատակազմին, իրենց կարծիքները կիսելու, արձագանքներ և առաջարկություններ անելու, որպեսզի ամրացնենք Մյուրի մեր ծրագրերը: Կներկայացվեն օրակարգի հարցեր և համապատասխան նյութեր, որոնցով հետաքրքրված է մեր համայնքը:

**Դասարանային խանգարումներ**

Աշակերտների ուսումնական ծրագրի ընթացքը չխանգարելու համար դասարանային խանգարումները պահում ենք նվազագույնի: Աշակերտներին խնդրում ենք, որ նախօրոք ծրագրեն և տանը սովորելու պատրաստված դպրոց գան: Ֆիզկուլտուրայի համազգեստը և իրեր բերեն իրենց հետ դպրոց գալիս: Նախապես պատրաստեք նրան, չմոռանա ճաշը կամ ճաշի դրամը իր հետ բերել: Մոռացած ճաշը կամ ճաշի դրամը, որը ծնողները ուշացումով են բերում դպրոց, կարելի է թողնել դպրոցի գրասենեակում, մինչև ճաշի ժամը, երբ աշակերտները կարող են վերցնեն այնտեղից:

**Կարգապահության կանոններ/Դպրոցի կանոններ**

*(Տեսեք Կրթաշրջանի ուսումնական խորհրդի կանոնները 48900 հոդվածի ներքո* ***և վարչական կանոնակարգերը կախակայման համար սահմանված ամբողջական ցուցակը)***

**Կարգապահության փիլիսոփայություն**

Ջոն Մյուր տարրական դպրոցը, համաձայն Ուսումնական խորհրդի, որդեգրել է վարքագծի չափանիշներ, որոնց պետք է ենթարկվեն բոլոր աշակերտները, և որոնք նաև, դպրոց հաճախելու պայմաններ են: Պատշաճ վարքագիծ է պահանջվում բոլոր աշակերտներից, դրական և կանոնավոր ուսումնական միջավայր ապահովելու համար: Այս կարգապահական կանոնները կազմվել են Մյուր տարրական դպրոցի կողմից՝ սահմանելու պատժամիջոցներ չափանիշներին չհետևող աշակերտների համար:

**Դրական վարքագծի խթանման ակնկալիքներ և աջակցություն (Positive Behavior Expectation and Support-PBIS)**

- Եղեք ապահով
- Եղեք պատասխանատու
- Եղեք հարգալից

Դրական խրախուսանք

Ջոն Մյուրում կիրառվում է Դրական վարքագծի **խթանման և աջակցություն** ծրագիրը, որը անվանվում է Positive Behavioral Incentive and Support (PBIS): Այս ծրագիրը պարգևների միջոցով խրախուսում է՝ ակնկալելիք վարք, որը ներառում է անվտանգություն, հարգանք, պատասխանատվություն և հոգատար վերաբերումք: Աշակերտները պատգևատրվում են Մյուրի տոմսակներով և հնարավորություն են ունենում շաբաթական կամ ամսական վիճակահանության մասնակցել և տարբեր արտոնություններ ստանալ:

Ի լրացում Մյուրի գնահատագրերի, մենք ունենք նաև Ամսվա ամենալավ սովորող և բարեկիրթ աշակերտի մրցանակը:

**Դպրոցից առաջ և հետո վարքագծի ակնկալիքներ**

1. Նախքան դպրոցը սկսվելը աշակերտները պետք է իրենց դասարանի շարքի մեջ սպասեն: Նրանք կարող են կարդալ կամ զրուցել իրենց ընկերների հետ: Նրանք չեն կարող խաղալ և վազել:
2. Աշակերտները չպետք է գնան իրենց դասարանը, առանց ուսուցիչների թույլատրության:
3. 4-րդ և 6-րդ դասարանների աշակերտները կարող են իրենց հեծանիվներով գալ դպրոց և պետք է գլուխը պաշտպանող սաղավարտ (helmet) դնեն:
4. Աշակերտները պետք է ելքի դարպասի մոտ սպասեն: Նրանք չեն կարող խաղալ և վազել:

**Խաղադաշտի վերահսկում**

Ձեր երեխայի անվտանգությունը մեր առաջնային պարտասխանատվությունն է: Աշակերտները պետք է դպրոց մուտք գործեն և հեռանան **խաղադաշտից միայն, և ՈՉ առջևի մուտքից: ԽԱՂԱԴԱՇՏՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ ԱՌԱՎՈՏՅԱՆ, ԺԱՄԸ՝** 7:30-ից առաջ-ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ և ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԻՆ ԵՎ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ՝ ԺԱՄԸ՝ 8:30-ից առաջ և ոչ էլ 3:00-ից ՀԵՏՈ: Եթե այս ժամերին երեխայի խնամատարության կարիք ունեք, ապա խնդրվում է զանգահարել խնամատարության գրասենյակ հետևյալ հեռախոսահամարով (818) 243-4710:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԴՊՐՈՑԻ ԱՐՁԱԿՈՒՄԻՑ ԱՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՎԵՐՑՎԵՆ

**Անցումային մանկապարտեզ- կեսօրից հետ 12:39**

**Մանկապարտեզ- 12:49**

**1-ից մինչև 3-րդ դասարաններ-2:20**

**4-ից մինչև 6-րդ դասարաններ- 2:40**

ԿԱՐՃՕՐՅԱ ԱՐՁԱԿՈՒՄ

(Խաղադաշտի վերահսկում ՉԿԱ 12:30-ից հետո)

**Անցումային մանկապարտեզ - 11:39**

**մանկապարտեզ - 11:49**

**1-ից մինչև 3-րդ դասարաններ-11:59**

**4-ից մինչև 6-րդ դասարաններ- 12:19**

Աշակերտները ՉՊԵՏՔ է, դասերից առաջ կամ հետո, խաղադաշտում կամ խաղասարքերի վրա խաղան: Երթևեկության հսկողությունը կավարտվի ժամը 3:00-ին: **Այն աշակերտները, որոնք չվերցվեն ժամը 3:00-ին, կտարվեն գրասենյակ:** Ծնողներին կամ արտակարգ իրավիճակների համար նշված անձին կտեղեկացվի, որ աշակերտին հնարավորին չափ շուտ վերցնեն: **Հետևաբար, եթե աշակերտը առանց վերահսկումի է և մնացել է մինչև ժամը 3:45-ը, և քանի որ գրասենյակը փակվում է ժամը 4:00-ին, ապա իրավապահ մարմինները կտեղեկացվեն այդ մասին: Դա արվում է ձեր երեխայի ապահովության համար:**

**Դրական խրախուսանքի**

Ջոն Մյուրում օգտագործվող Դրական խրախուսանքի ծրագիրը հետևյալն է՝ Մյուրի ոսկյա դրամը, Մյուրի տոմսակները, Ամսվա բարեկիրթ աշակերտի մրցանակը, Block "M" Points, Ամսվա ամենալավ սովորողներ և ամսական «Մյուրի պարգև» մրցանակ: Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք այս միջոցառումների նկարագրությունների այբենական ցանկը:

**Դրական խրախուսանք**

Ջոն Մյուրում կիրառվում է Դրական վարքագծի **խթանման և աջակցություն** ծրագիրը(PBIS), որը խրախուսանքի ներառում է հետևյալները՝ Մյուրի ոսկյա դրամը, Մյուրի ոսկյա տոմսակները, Ամսվա բարեկիրթ աշակերտի մրցանակը, Ամսվա ամենալավ սովորողներ և ամսական «Մյուրի պարգև» մրցանակ:

**Անկարգապահության հետևանքները**
Դպրոցի կանոնների խախտման հետևանքների գրքույկում նշված են հետևյալ գործողությունները.

***<u>Դասարանում</u>***
Յուրաքանչյուր ուսուցիչ ստեղծում է իր դասարանի կարգապահության կանոնները: Այս կանոնները կքննարկվեն դպրոցական վերամուտի երեկոյի ընթացքում:

***<u>Դասամիջոց/Ճաշաժամ</u>***
Աշակերտները կարող են՝ նախազգուշացում ստանալ, զրկվել մասնակցությունից, «կարմիր թերթիկ» ստանալ, տնօրենի մոտ ուղարկվել, գրություն ուղարկել տուն և ծնողների/խնամակալի ստորագրությունը պահանջել կամ հեռախոսել տուն:

***<u>Կախակայման հիմունքներ</u>***
*Կալիֆորնիայի ուսումնական օրենսգրքի 48900 հատվածների համաձայն:*

**Սեռական ոտնձգություններ (ներառյալ կովարարությունը) (հոդված 48900.2)**
Բացի արդեն նշված 48900 հոդվածի (էջ 6), աշակերտը կարող է դպրոցից կախակայվել, կամ հեռացման խնդրի առջև կանգնել, եթե գերտեսուչը կամ դպրոցի տնօրենը, ուր աշակերտը արձանագրված է, որոշում կայացնի, որ աշակերտը սեռական ոտնձգություններ է կատարել՝ ըստ է 212.5 հոդվածի սահմանված կանոնների:

**Կանոններ կովարարության դեմ**
Որևէ տեսակի կովարարություն չի հանդուրժվի: Կրթշրջանը ստեղծել է գնահատումների ձև, որպեսզի կանոների պատահարների մասին տեղեկանա և իմանա, թե ինչպիսի քայլեր առնվեն դրանց դեմ:

**Կրթաշրջանի Անգլերեն լեզվի խորհրդատվական հանձնախումբ (DELAC)**
DELAC-ի պատասխանատվությունն է Ուսումնական խորհրդին խորհրդատություններ տալ, հիմնական ծրագիր մշակել Անգլերեն լեզվի զարգացման, ինչպես նաև կրթաշրջանի ողջ տարածքով՝ դպրոց առ դպրոց, կարիքներ գնահատելու ծրագրեր զարգացնել և աջակցելու համար, ինչպես նաև, դպրոցի R-30 լեզվի հարցաշար անցկացնել: Այս հանձնաժողովում, Մյուրը՝ Կրթաշրջանի մակարդակով երկու ներկայացուցիչներ կունենա: Հետաքրքրված ծնողները պետք է կապ հաստատեն Մյուրի ուսուցիչ մասնագետի հետ:

<u>էլեկտրոնային հաղորդագրություններ</u>
Ջոն Մույրի բոլոր աշխատակիցները մատչելի են էլ նամակների միջոցով: Ծնողներ կարող են հասցեագրել իրենց նամակները աշխատակազմին հետևյալ եղանակով կարելի է նամակ ուղարկել էլ. փոստի հասցեով.
1) մուտքագրեք անվան առաջին տառը,
2) մուտքագրեք նրանց ազգանունը.
3) մուտքագրեք @ **gusd.net**
Օրինակ ՝ էլ հասցե՝ Mrs. Zavala: *jzavala@gusd.net*

**<u>Արտակարգ իրավիճակների պաշտպանության ծրագիր</u>**
Ջոն Մյուր տարրական դպրոցի Արտակարգ իրավիճակներ ծրագրի նպատակն է աշակերտներին և աշխատողներին պաշտպանել մեծ աղետի պատահարից: Ծրագիրը դպրոցի անդամների հետ կազմել է աղետից պաշտպանվելու մի խումբ և սահմանել պատասխանատվություններ: Ծրագիրը, ամեն տարի թարմացվում և վերամշակվում է դպրոցի անվտանգության հանձնախմբի կողմից: Ըստ Գլենդել հանրային դպրոցների կրթաշրջանի արտակարգ իրավիճակների օրենքի՝ կապակցված Մյուր տարրական դպրոցի աշակերտներին, ծնողները կարող են ակնկալել հետևյալ գործողությունները Մյուր տարրական դպրոցում՝
<u>Աշակերտներին լիազորված չափահասի հանձնելու վերաբերյալ գործընթացներ.</u>

1. Գնացեք դեպի Acacia փողոցի վրա գտնվող "Request Gate"-ը ձեր երեխային վերցնելու համար:
2. Մոտեցեք Acacia փողոցի վրա գտնվող "Request Gate"-ը և ստորագրեք ձեր երեխայի արձակման համար: Ձեր երեխան ձեզ մոտ կբերվի: Բոլոր մյուս դպրոցի դռները փակ կլինեն ապահովվելու աշակերտների անվտանգությունը:

<u>Խնդրվում է վստահանալ...</u>
Որ ձեր երեխայի արտակագ իրավիճակների քարտը այժմեական տեղեկություններով է գրանցված: **<u>ԱՆՄԻՋԱՊԵՍ</u>** հայտնեք դպրոցի գրասենյակին, եթե հասցեի կամ հեռախոսահամարի փոփոխություններ կան: Խնդրվում է կապ հաստատել դպրոցի գրասենյակի աշխատակցի հետ, տեղեկանալու թե ինչպես արձանագրվել Q Parent Conect -ին: **Ոչ մի երեխա չի արձակվի պատահական որևէ մեկի, եթե նրա անունը Emergency Card-ի վրա չի արձանագրված: Խնդրվում է արտակարգ իրավիճակի դեպքում ձեզ հետ բերել ձեր ինքնահաստատման անձնական քարտը (I.D.):**

<u>Հիմնական գործնական քայլ աղետի/երկրաշարժի պարագայում</u>
- Երբ ապահով է, ուսուցիչները և աշակերտները կզատեն շենքը և դուրս կգան խաղաղաշտ ու կարգով կշարվեն իրենց դասարանին հատկացված տարածքում:
- Ուսուցիչները ներկա-բացակա կանցկացնեն և բացակայողների անունները կներկայացնեն դպրոցի կորածների և վնասվածների հրամանատարական կենտրոն: Բոլոր աշակերտները կկրեն իրեն ինքնահաստատման/ արտակարգ իրավիճակի արձակման պիտակները:
- Դպրոցի խմբերը (Search and Rescue, First Aid, Triage, etc.) կզեկուցեն իրենց պահակատեղերին:
- Կրթաշրջանի աշխատողները կմնան իրենց տեղում և կղեկավարեն աշակերտներին մինչև նրանք վերցվեն:
- Ծնողները կարող են իրենց երեխաներին վերցնել Acacia փողոցի վրա գտնվող նշանակետից:

<u>Դպրոցի փականքի ընթացակարգ</u>
Դպրոցի ողջ տարածքը փականքի ընթացակարգի մեջ կլինի, բոլոր դռները և դարպասները կկողպվեն: Բոլոր աշակերտները ապաստան կգտնեն ամենամոտ դասարանում: Ոչ մի աշակերտ չի կարձակվի մինչև "all clear" –անվտանգ հայտարարություն արվի:

**<u>Եթե ինչ-որ բան եք տեսնում, մի բան ասեք (հաղորդեք).</u>**

GUSD ղեկավար մարմինը և վարչակազմը խիստ զգայուն են մեր աշակերտների, ծնողների և համայնքի մտահոգությունների վերաբերյալ՝ կապված դպրոցի անվտանգության հետ: Դպրոցների անվտանգության պահպանումը տարածվում է մեր դպրոցների պատերից դուրս և պահանջում է անողոք նվիրվածություն և ջանք բոլոր շահագրգռված մարմիններից, որոնք կապված են մեր աշակերտների հետ: **Խնդրում ենք անտարբեր չլինել. եթե «ինչ-որ բան եք տեսնում, մի բան ասեք»: Հաղորդեք ցանկացած կասկածելի գործունեության մասին մեր դպրոցի կամ մեր շրջանի աշխատակազմի:**

**Մենք լրջորեն ենք վերաբերում սպառնալիքներին**

Աշակերտի կամ չափահասի հանդեպ ընդունելի չէ բռնի սպառնալիքներ գործադրելը՝ լինի դա դպրոցում, դպրոցից դուրս, թե սոցիալական լրատվացանցերի միջոցով: Որևէ անձիք, ովքեր կասկածվում են սպառնալիքների մեջ, պետք է ակնկալեն, որ հարցաքննվել են դպրոցի անձնակազմի կողմից և/կամ հետաքննություններ են անցկացվելու տեղի իրավապահների կողմից: Մեր աշակերտների և աշխատակիցների անվտանգությունը չի վարկաբեկվի: Խնդրում ենք ձեր աշակերտների հետ խոսեք սպառնալիքների լրջության մասին, հատկապես բռնի սպառնալիքների, դպրոցի, աշակերտի կամ աշխատակազմի նկատմամբ:

**Անգլերեն լեզվի խորհրդատվական հանձնախումբ (ELAC)**

ELAC-ը հնարավորություն ունի խորհրդատվություն տալ, վերանայել և օգնություն ցուցադրել դպրոցի տնօրենին և աշխատակազմին՝ համապատասխան ծրագրեր զարգացնելու անգլերենի սահմանափակ հմտություն ունեցող աշակերտների համար: 2017 թվականի փետրվարին այս խումբը քվեարկել է Դպրոցական խորհրդին (SSC) միանալ: Միացյալ ժողովներ են անցկացվում ամբողջ տարին շարունակ: Տես Դպրոցական խորհրդի ժողովների ամսաթվերը:

**Անգլերեն լեզվի զարգացման ծրագրեր (ELD)**

ELD-ն ծառայություններ է մատուցում անգլերենի սահմանափակ հմտություն ունեցող աշակերտներին: Ուսուցիչները տարբեր դասավանդման ստրատեգիաներ կգործածեն վստահանալու, որ աշակետները ինչքան հնարավոր է շուտ անգլերեն կարդալ, գրել կամ խոսել սովորեն և միաժամանակ շարունակեն տեղեկություններ ստանալ պատմության, հասարակագիտության և գիտության ոլորտներում: Օրվա ընթացքում, այս աշակերտները շփվում են հմուտ անգլերեն իմացող աշակերտների հետ, միաժամանակ դասավանդումներ ընթացքում, իրենց ուսումնական նպատակներին հասնելու համար:

**Շրջագայություններ**

Ծնողների և PTA-ի նվիրատվությունները, ինչպես նաև դպրոցի հիմնադրամը հնարավորություն են ստեղծում ավտոբուսներ մատակարարել շրջագայությունների համար: Ուսուցիչները կազմակերպում են ուսումնական ծրագրին աջակցող՝ առնվազը տարին 1 շրջագայություն: Ծնողից գրավոր թույլատվություն է հարկավոր բոլոր շրջագայություններին մասնակցելու համար: Այն աշակերտները, որոնք հաճախ դպրոցի կանոններին չեն հետևում, պետք է իրենց ծնողների ուղեկցությամբ մասնակցեն այս շրջագայություններին: Եթե ուսուցիչները գտնում են, որ որոշ աշակերտներ շրջագայության ընթացքում չեն ենթարկվում, կամ չեն հետևում տրված ուղղություններին և այսպիսով վտանգ են առաջացնում իրենց և ուրիշների համար, կմնան դպրոցում, կամ պետք է շրջագայության ընթացքում իրենց ուղեկցեն ծնողները: Աշակերտները, որոնք շրջագայությանը չեն մասնակցի, պետք է դպրոց գան: Նրանք կտեղավորվեն մի այլ դասարանում, ուր կմասնակցեն դասավանդումներին:

**FLAG, Օտար լեզուների դասավանդման ծրագիր**

Գլենդելի Օտար լեզուների դասավանդման ծրագիրը երկկողմանի ներգրավման ծրագիր է, որը բնիկ անգլերեն, կամ իսպաներն խոսող աշակերտների բոլոր առարկաների դասավանդումները անցկացնում է երկու լեզուներով: Այս ծրագրի նպատակն է մինչև 6- րդ դասարան ավարտելը զարգացնել երկլեզու գրագետ աշակերտներ, բոլոր ուսուցվող առարկաներում: 90/10 երկլեզու ներգրավման ծրագրում, նախակրթարանի և 1-ին դասարանի աշակերտներին, օրվա 90%-ն ուսուցում են իսպաներենով, իսկ 10%-ին անգլերենով: Ինչքան աշակերտի դասարանային մակարդակը բարձրանում է նրա իսպաներենի դասավանդումների տոկոսային հարաբերությունը նվազում է, իսկ անգլերենինը ավելանում: Երբ աշակերտները հասնում են 5-րդ և 6-րդ դասարանի մակարդակին, դասավանդումները հավասարապես բաժանվում են անգլերեն և իսպաներեն լեզուների միջև: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կապվեք դպրոցի հետ:

**Սննդի ծառայություններ**

Ծնողները պետք է դիմեն երեխաների համար անվճար և զեղչ գնով տարեկան ճաշից օգտվելու ծրագրին: Դիմումները տուն կուղարկվեն ուսուտարվա սկզբին:

Նախաճաշ

Օրական առավոտյան ժամը 7:30-7:55-ը նախաճաշ է մատուցվում Մյուրի ճաշարանում: Արժեքն է՝ $1.25: Զեղչ գնով կամ անվճար նախաճաշը մատչելի է որոշ աշակերտների համար: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կապվեք դպրոցի գրասենյակի հետ:

Նախաճաշի երկրորդ հնարավորություն

Նախաճաշ ստանալու երկրորդ հնարավորություն կտրվի, վաղ առավոտյան նախաճաշին դպրոց չհասած աշակերտներին: Արժեքը նույնն է: Երկրորդ նախաճաշը կտրվի առավոտյան ընդմիջման ժամին:

Ճաշ

Աշակերտները կարող են տանից ճաշ բերել, կամ գնել դպրոցի ճաշարանից: Ճաշի արժեքն է $2.75: Այն աշակերտները, որոնք տոպրակով ճաշ կբերեն, կարող են կաթ կամ հյութ գնել 50¢: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը մասնակցում է Պետական դպրոցների նախաճաշ/ճաշ ծրագրին: Այն երեխաները, որոնց ընտանիքի տարեկան եկամուտը համապատասխանում է պետական ծրագրի չափանիշերին զեղչ գնով՝ 50¢ (ճաշ), կարող են գնել: Տեղի և ժամանակի սահմանափակության պատճառով ծնողերը չեն կարող մասնակցից լինել իրեն երեխաների ճաշաժամին: Խնդրվում է երեխայի համար տեղական, fast food ճաշարաններից ճաշ **<u>չբերել</u>** դպրոց, կարող են ճաշարանի ճաշից կամ իրենց կապոցային ճաշից օգտվել:

Սնաքներ

Սնաքները ընտրովի են և կարելի է այն ուտել ճաշարանի տարածքում ընդմիջումներին: Միայն սննդարար սնաքներ են թույլատրելի: Խնդրվում է մեկ անգամ ուտելու սնաք ուղարկել ձեր երեխայի հետ և **<u>ՈՉ</u>** մեծ տոպրակով չիփսեր, ինչպիսին է՝ "hot cheetos" տեսակը:

**Հիմնադրամ**

Ջոն Մյուր տարրական դպրոցի հիմնդրամը անշահախնդիր կազմակերպություն է, որը համագործակցում է համայնքի և դպրոցի կրթաշրջանի հետ, նպաստելու կրթաշրջանի աշակերտների որակավոր ուսուցմանը: Կրթաշրջանի առաքելությունն

է գոյացնել ռեսուրսներ և այն տրամադրել հարստացնելու, պահպանելու և ընդլայնելու ծրագրերը, բոլոր աշակերտներին ուսումնական ձեռքբերումների հնարավորություններ տալ և պատասախանատու և արդյունավետ քաղաքացիներ դարձնել նրանց:

## G.A.T.E. (Շնորհալիների և տաղանդավորների ուսուցում)

GATE-ը մի ծրագիր է, որն առաջարկվում է 4-6 դասարանի աշակերտներին: Աշակերտները ճանաչվում են կրթաշրջանի ուղեցույցների հիմունքներով, աշակերտներին հնարավորություններ տալով սովորել և դառնալ պատասխանատու և աշխատասեր քաղաքացիներ:

## Տնային աշխատանք

Նպատակ. Տնային աշխատանք ծրագրելու ընթացքում պետք է շեշտը դնել հանձնարության նշանակութան վրա: Տնային հանձնարարությունը պետք է՝

1. Ուժեղացնի հիմնական գիտելիքները
2. Զորացնի ուսումնառության սովորույթները
3. Ընդարձակի դասարանային ուսումնառությունը
4. Զարգացնի նախաձեռնություն, ինքնակառավարում և պատասխանատվություն
5. Ինքնուրույն մտածելու կարողությունը զարգացնի
6. Ընդլայնի հետաքրքրությունների մտահորիզոնը և իմաստավորի ազատ ժամերը

Հիմնական սկզբմունքներ

Որպեսզի արդյունավետորեն հասնենք այս նպատակներին, տնային աշխատանքը պետք է զգուշորեն ծրագրվի համապատասխանելով հետևյալ հիմունքների հետ.

1. Հանձնարարության նպատակը և դասարանում սովորածի հարակցությունը պետք է հստակորեն սահմանվի ուսուցչի կողմից և հասկանալի դառնա աշակերտին:
2. Ուսուցիչը աշակետներին կրացատրի ոչ միայն ինչ անելու, այլ նաև ինչպես անել դա:
3. Հանձնարարությունը պետք է դուրս գա դասարանի սահմաններից և լինի իմաստալից, հետաքրքիր և զանազան:
4. Լինի ազդեցիկ ուսումնական օգնություն: Տնային աշխատանքները հավաքվում և ստուգվում են ուսուցչի կողմից:
5. Տնային աշխատանքները կարևոր մասնիկներ են ուսումնական ծրագրին և պետք է դրականորեն արտացոլեն աշակերտի գնահատականը.
   a. Քրեդիտ է տրվում աշակերտի կատարած և վերադարձրած տնային աշխատանքի համար:
   b. Ծնողները պետք է տեղեկանան աշակերտի չկատարած տնային աշխատանքի մասին:

Ծնողի պատասխանատվությունը

Ծնողները կարող են օգնել երեխային, որպեսզի նրանց ժամանակը օգտավետ գործածվի, որոնք են տանը իրենց դասերը պատրաստելու հետևյալ առաջարկությունները.

- ❑ Ձեր երեխային հարցրեք, որ ձեզ հետ կիսի մի բան, որը սովորել է այսօր և թույլ տվեք, որ դա ձեզ սովորեցնի:
- ❑ Ձեր երեխային հարցրեք իր շաբաթական ուղղագրության բառերը, ինչպես են դրանք հեգվում, դրանց նշանակությունը և ինչպես դրանք օգտագործել նախադասության մեջ:
- ❑ Կրկնեք մաթեմատիկական գործողությունները:
  **Օրինակ՝** 2+2=.... 10-7=.... 6x7= .... 25:5= ....
  Դրանք ներկայացրե՛ք խաղի ձևով:
- ❑ Ձեր երեխային հարցրեք, որ ձեզ հետ կիսեի մի բան, որ նա սովորել է այսօր մաթեմատիկայի դասարանում և թույլ տվեք, որ դա ձեզ սովորեցնի:
- ❑ Ձեր երեխային ասեք որ կարդա 2 էջ/պարբերություն և դա ամփոփի ձեզ համար: Ապա, տվեք 2 հարց իր կարդացածի վերաբերյալ:
- ❑ Ստուգեք ձեր երեխայի տնային աշխատանքների պահարանը և աշակերտի ծրագիրը ամեն երեկո, կարևոր տեղեկությունների համար և թե ինչպես է ձեր երեխան առաջադիմում դպրոցում:

## ք Ինքնքուրույն ուսուցում

Երբ երեխան դասերից զրկվում է անհետաձգելի և անձնական պատճառներով, ծնողները կարող են երեխայի դասարանային աշխատանքները վերցնել նրա համար: Կամավոր ինքնուրույն ուսուցման ծրագիրը հնարավորություն է տալիս աշակերտներին դասարանային աշխատանքը կատարել, երբ նրանք բացակայում են հինգ (5) և ավելի օրեր շարունակ: **Որպեսզի ձեր երեխան կարողանա մասնակցել ինքնուրույն ուսուցման ծրագրին ծնողը/խնամակալը պետք է դպրոցին տեղեկացնի այդ մասին առնվազն երկու (2) շաբաթ առաջ:** Ընդունելությունը ծրագրում հիմնված է աշակերտի ինքնուրույն աշխատանքի փաստի հիմունքի վրա և թե աշակերտը կարող է հանձնարարված աշխատանքը կատարել: Դպրոցը պարտավոր է յուրաքանչյուր մասնակից աշակերտի տեղեկությունները պահել, ներառյալ՝ բոլոր կատարված աշխատանքների կրկնօրինակները և աշակերտի գնահատված աշխատանքները: Աշակերտը, ծնողը, ուսուցիչը և տնօրենը պետք է համաձայնագիր ստորորագրեն: Ռեսուրսների ծրագրին (RSP) մասնակցող աշակերտները ՉԵՆ կարող մասնակցել Ինքնուրույն ուսուցման ծրագրին, եթե նրանց Անհատական ուսուցման ծրագիրը (IEP) մասնավորապես ապահովում է մասնակցությունը:

Անհատական ուսուցման ծրագիրը (IEP) մասնավորապես ապահովում է մասնակցությունը:

## Ուսուցման հիմունքներ

Ջոն Մյուրի տարրական դպրոցի ուսուցման հիմունքերը տրամաբանության վրա են կենտրոնացած: Բոլոր աշակերտները կցուցաբերեն գրագետ տրամաբանական կարողություններ:

Ուսուցման լավագույն սովորություններ

- Իրագործել i-Ready-ի հանձնարարությունները (տարին 3 անգամ ստուգել առաջադիմությունը) և Ready Common Core Curriculum-ը (Համընդհանուր ուսումնական ծրագիր):
- Իրագործել Common Core-ի նահանգային ստանդարտները դպրոցում, իրագործելով չորս C-ը՝ Critical Thinking-Տրամաբանություն
  Creativity-Ստեղծարարություն
  Communication-Հաղորդակցություն,
  Collaboration-Համագործակցություն
- Կիրառել մաթեմատիկայի ութ CCSS փորձերը:
- Շարունակել դպրոցի միջամտության ծրագրերը (Response to Intervention Program-RTI), որը բազմազան ընթերցանության է ներառում:
- Բարձրացնել տեխնալոգիայի և թվային գրագիտության մակարդակը:
- Իրականացնել մտային քարտեզ և Քեգան կառուցվածք սովորելու ստրատեգիաները:

## Ուսուցմանն առաջնորդող թիմ (ILT)

Ուսուցմանն առաջնորդող թիմը կազմված է տնօրենից, փոխտնօրենից, ուսուցիչ մասնագետից, դասակարգված աշխատակազմից և յուրաքանչյուր դասարանային մակարդակ ներկայացնող ուսուցիչներից:

Ուսուցմանն առաջնորդող թիմը զբաղվում և լուծում է դպրոցի ուսուցման հետ կապված խնդիրներ՝ բյուջե, կարգապահություն, ուսումնական ծրագրեր և այլ դպրոցական ծրագրեր և դպրոցական միջոցառումներ:

## Գործիքային երաժշտություն

Կամավոր գործիքային երաժշտության մասնակցության ընտրություն է տրվում 4-ից մինչև 6-րդ դասարանների աշակերտներին: Երաժշտության ուսուցիչը դասավանդում է ուրբաթ՝ սովորական դպրոցական օրերին: Կրթաշրջանն ունի սահմանափակ թվով գործիքներ: Տարեվերջին աշակերտները ելույթներ են ունենում: Աշակերտները պետք է պատասխանատվություն վերցնեն իրենց գործիքների և երաժշտության գրքերի խնամքի համար: Դասաժամերը չեն խանգարվի աշակերտներին գործիքներ բաժանելու համար:

## Գրադարան

Յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն կընձեռնվի շաբաթը մեկ անգամ այցելել դպրոցի գրադարանը: Աշակերտները գրքեր կստանան ըստ անցյալ շաբաթվա դուրս գրած գրքերի վերադարձման պատասխանատվության հիմունքների: Կորցրած կամ վնասված գրադարանի գրքերը պետք է փոխարինվեն աշակերտների ծախսերով:

## Կորած և գտնված իրեր

Կորած և գտնված իրերը գտնվում են 1119 սենյակի դրսում: Լավ է, որ աշակերտների հագուստները և իրերը իրենց անվան պիտակն ունենան, այդպիսով կճանաչվեն տերերը: Եռամսյակի վերջին, չբացահայտված բոլոր հագուստները կնվիրվեն Գուդվիլին: Նվիրատվություն անելուց մեկ շաբաթ առաջ հեռախոսային պատգամով հիշեցում կուղարկվի տուն: Դպրոցը պատասխանատվություն չի կրում կորած իրերի համար:

## Դեղեր

Այն աշակերտները, որոնք դպրոցական օրվա ընթացքում դեղեր ընդունելու կարիք ունեն, պետք է թույլատվագիր ներկայացնեն իրենց ծնողից կամ խնամակալից, ԵՎ փաստաթուղթ՝ "Request for Medication To Be Taken During School Hours" ֆորմը կարող եք ստանալ դպրոցի առջևի գրասենյակից: Աշակերտները չեն կարող իրենց մոտ որևէ ժամանակ որևէ դեղ պահել և դեղը նրանց ՉԻ ՏՐՎԻ դպրոցի աշխատակազմի կողմից, եթե դա գրանցված չէ ֆորմի վրա: Այն ծնողները, որոնք բժշկի լրացրած այս ֆորմը չունեն, բայց ցանկանում են, որ իրենց երեխան դպրոցական օրվա ընթացքում դեղ վերցնի, կարող են գալ դպրոց և իրենց երեխային տալ դեղը բուժքրոջ գրասենյակում:

## Բաց դռների օր

Սա մի հատուկ երեկո է, որը տեղի է ունենում դպրոցի երրորդ եռամսյակին: Աշակերտները իրենց ընտանիքների ուղեկցությամբ հնարավորություն ունեն դասարանները այցելել: Աշակերտներին հնարավորություն է ընձեռնվում բացատրել, թե ինչ են սովորել և ցուցադրել իրենց դպրոցական աշխատանքները:

## Ծնողական խորհրդակցություններ

Ծնողը կարող է ուսուցչի հետ հանդիպման խնդրանք ներկայացնել, զանգահարելով և պատգամ թողնելով դպրոցի գրասենյակում: Ուսուցիչը կվերադաձնի հեռախոսազանգը և ժամադրություն կնշանակի խորհրդակցության համար: Նախամանկապարտեզի ուսուցիչները ծնողական խորհրդակցության ժողովի են հրավիրում առաջին եռամսյակի վերջին:

## Ծնողի այցելություն

Բոլոր այցելողներից պահանջվում է օրվա ընթացքում, ժամը 7:30-4:00, դպրոց ժամանելիս ներկայանալ դպրոցի գրասենյակ: Այցելողների անցման թույլատրության պիտակը պարզորեն պետք է ցուցադրել հագուստի վրա և կրել այն դպրոցում եղած ժամանակմիջոցում: Խնդրվում է, ժամադրություն վերցնել ուսուցչի և տնօրենի հետ քսան (20) րոպե հանդիպում ունենալու համար: Այցելողներին կուղեկցի աշխատակազմի անդամը ձեր դիտարկումների և այցելությունների ընթացքում:

## Անձնական իրեր

Խաղալիքներ, խաղադաշտի սարքավորումներ, էլեկտրոնային խաղեր, դրամ (բացի ճաշի դրամից), բեյսբոլի քարտեր, փոխանակվող քարտեր և այլ անձնական իրեր դպրոց բերել ՉԻ թույլատրվում: Դպրոցը չի կարող պատասխանատվություն վերցնել ձեր վնասված կամ կորած սեփական իրերի համար: Դպրոցը կպահի այս իրերը մինչև ծնողների դպրոց գալը և դրանք ստանալը:

## Լուսանկարվելու օր

Բոլոր աշակերտները և աշխատակազմը անձնական և դասարանային լուսանկարի հնարավորություն կստանան առաջին եռամսյակում, լուսանկարչական ընկերության կողմից: Նկարները կարող եք ընտրել ըստ ընձեռնված ընտրությունների:

## Ֆիզիկական ուսուցման ծրագիր (P.E.)

Որակավորված ֆիզիկական ուսուցման ուսուցիչը կներկայացնի հերթական, չափավորված և 120 րոպե տևողությամբ շաբաթական ծրագիր, 4-6 դասարանների աշակերտների համար: Մանկապարտեզից մինչև երրորդ դասարանների համար դասղեկը պատասխանատու կլինի ֆիզիկական ուսուցման համար, օրական 20 րոպե դասավանդում, ամբողջ տարին շարունակ, որը կազմված է հատուկ ուսումնական ծրագրից և բոլոր ուսուցիչներին պատրաստումներ են տրվել: Ֆիզիկական ուսուցման սարքավորումները իրենց մեջ ընդգրկում են՝ օղակներ (hula hoops), կոներ, Frisbees, ցատկելու պարաններ, տարբեր չափսերի գնդակներ, վոլեյբոլի ցանցեր, թենիսի ռակետներ, հոկեյի փայտեր, հոկեյի գնդակ և ձեռքի գնդակի սարքավորումներ: Ինչպես բոլոր դրսի միջոցառումները, այնպես էլ ֆիզիկական ուսուցման դասերը կրճատվում և տեղափոխվում են ներս, եթե եղանակը ցուրտ է կամ, երբ օրվա տեսության մասնագետը ահազանգում է օդի աներեևնպաստ լինելը:

### Ֆիզիկական ուսուցման ուղեցույցներ 4-6 դասարանների համար

Բարձր դասարանների ֆիզիկական ուսուցման դասերն կայանում են շաբաթը երկու անգամ: Որպեսզի ձեր երեխան ֆիզիկական ուսուցման դասավանդումների առավելագույնը ստանա և կարողանա հանգիստ և ապահով մասնակցել դասավանդումներին, մենք առաջարկում ենք հետևյալները՝

- Ձեր երեխան մարմնամարզության կոշիկներ հագնի:

- Ձեր երեխան համապատասխան համազգեստ՝ շալվար կամ կարճ շալվար հագնի:
- Ձեր երեխան սրբիչ և շշով ջուր բերի դասարան:

Կալիֆորնիա նահանգի պահանջն է, որ բոլոր աշակերտները շաբաթական 100 րոպե մասնակցեն ֆիզիկական ուսուցման դասավանդումների: Աշակերտը կարող է մեկ շաբաթ (ամեն եռամսյակի) հարգելի բացակայություն ունենալ ֆիզիկական ուսուցման դասավանդումներից, եթե երկտող ներկայացվիի ծնողից: Եթե նա հիվանդություն կամ վնասվածք ունենա, պահանջվում է բժշկից նամակ ներկայացնել: 5 օր բացակայությունից հետո, նույնիսկ երբ ծնողը հարգելի բացակայության նամակ է ներկայացրել, բացակայությունը ազդեցություն կթողնի ձեր երեխայի գնահատականի վրա: Խնդրվում է հիշել, որ եթե աշակերտը որևէ վիրակապի (ace bandage), ամրակների (crutces), կամ այլ օրթոպետիկ սարքի, կարիք ունի, բժշկից գրավոր բացատրություն է հարկավոր:

**Ոչ մի երեխա չի բացառվի ֆիզիկական ուսուցումից առանց ծնողի նամակի,** որի վրա պետք է նշված լինի ամսաթիվը, ծնողի ստորագրությունը, կապի հեռախոսահամարը և բացառվելու պատճառը: Այս նամակը պետք է գրասենյակ բերվի նախքան դպրոցը սկսվելը, որպեսզի թույլտվություն տրվի աշակերտին: Այս թույլտվությունը ձեր աշակերտին կազատի ընդմիջումից և ֆիզկուլտուրայի դասավանդումներից:

Կալիֆորնիա նահանգը որդեգրել է Fitness Gram քննական ձևը, որը լավագույնն է ֆիզիկուլտուրայի ուսուցման մեջ: Դա, ամեն տարի փետրվարից մինչև մայիս անցկացվում է բոլոր հինգերորդ դասարանի աշակերտների համար: Այս քննությունը գնահատում է աշակերտների ֆիզիկական ուսուցման մակարդակի հինգ բաղադրիչները.

1) աէրոբիկ կարողություն, 2) ֆիզիկական կառուցվածք,
3) մկանների ուժ, 4) տոկունություն և
5) ճկունություն: Որպես Գլենդելի հանրային դպրոցների ֆիզիկական ուսուցման ծրագրի մասնիկ, ուսուցիչները քննություններ են անցկացնում 4-րդ և 6-րդ՝ ինչպես նաև 5-րդ դասարանների համար: Չնայած այն փաստի, որ միայն 5-րդ դասարանների գնահատականներն են զեկուցվում նահանգին, կրթաշրջանը գտնում է, որ ծրագիրն ավելի արդյունավետ է բոլոր աշակերտների մասնակցությամբ: Եթե աշակերտները անկարող են նշանակված ժամկետին ֆիզիկական ուսուցման քննություն հանձնել՝ հիվանդության/վնասվածքի պատճառով, ապա նրանց հնարավորություն կտրիվի այդ քննությունը հանձնել ավելի ուշ, մի այլ քննական ժամանակամիջոցում:

## Հոգեբան

Դպրոցի կես դրույքով աշխատող հոգեբանը Մյուրում քննություններ և աշակերտների գնահատումներն է անցկացնում Աշակերտի հաջողության խմբի առաջարկով:

## PTA-ի անդամները

PTA-ին մասնակցելը ամենակարևոր կապն է դպրոցի, աշխատակազմի և ծնողների միջև: PTA-ի անդամները կարող են կամավորաբար և տարբեր ձևերով օգնել դպրոցին, ներառյալ հատուկ միջոցառումները և իրադարձությունները: Բոլոր ընտանիքներին և աշխատակազմին խրախուսում ենք միանալ PTA-ի աշխատանքներին:

## Կարմիր ժապավենի շաբաթ

Կարմիր ժապավենի շաբաթը տարեկան իրադարձություն է, որը 1986 թվականից ի վեր տեղ է գտել Միացյալ Նահանգերի բոլոր դպրոցներում: Համագործակցված PTA-ի հետ, Կարմիր ժապավենի միջոցառման նպատակն է ներկայացնել՝ միացյալ, դրական և ակնհայտ հանձնառություն, որն է ապահով և թմրադեղերից զերծ Ամերիկա:

## Ռոբատիկների ակումբ

4-րդ, 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտները կարող են մասնակցել Lego Robotics Club-ի պարապմունքներին, ուր աշակերտները ծրագրավորում են Lego Robot-ներ: Այս աշխատանքը բացահայտում է STEM-ի հմտությունները (Science, Technology, Engineering and Mathematics) և հնարավորություն տալիս՝ ստեղծագործելու, երևակայելու և զվարճանալու: Աշակերտները սովորում են ծրագրավորել և հասկանալ թե ինչ ճանապարհներով են ռոբոտները հրամանները կատարում: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը մայիս ամսին անցկացնում է ռոբատիկների մրցույթ, ուր բոլոր թիմերը մասնակցում են այս մրցույթին: Լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք Պրն. Ֆրանկ Գոնզալեսի հետ՝ fgonzalez@gusd.net հասցեով կամ զանգահարեք (818)241-4848 հեռախոսահամարով:

## Ապահովություն և անվտանգություն

Ապահովություն և անվտանգությունը մեր առաջնային խնդիրն է դպրոցի աշխատակազմի և աշակերտների համար: Դպրոցական ժամերի ընթացքում բոլոր խաղադաշտերի դարպասները պահվում են կողպված: Անցման թույլատրություն և ստորագրություն է պահանջվում բոլոր այցելուներից, որոնք դպրոց և դասարաններ են այցելում, ժամը 7:30-4:00 միջև: Կրթաշրջանի աշխատողները և ողջ անձնակազը պետք է ինքնությունը հաստատող նկարով կրծքանշան կամ այցելուի կրծքանշան կրեն:

## Ամսվա գիտունը և քաղաքացին

Յուրաքանչյուր դասարանից պատվարժան աշակերտ է ընտրվում և ճանաչվում իր ուսումանկան բարձր կատարումների (Scolar Of The Month) և գերազանց քաղաքացիության համար (Citizen Of The Month): Ուսուցիչները ընտրում են այս աշակերտներին ըստ իրենց ձեռքբերումների և դասարանում ցուցաբերած օրինակելի քաղաքացու վարքի համար:

## Դպրոցի հաշվետվության զեկուցագիր (SARC)

Կալիֆորնիայի յուրաքանչյուր դպրոց պետք է պատրաստի Դպրոցի հաշվետվության զեկուցագիր (SARC): Տեղեկություններ տալու հիմնադրամի, ծրագրերի և ուսումնական առաջադիմության տվյալների վերաբերյալ, իր մեջ ընդգրկելով ընդհանուր դպրոցական ուսումնական մթնոլորտը: Դուք կարող եք համակարգչի միջոցով տեղեկություններ ստանալ **2020/2021** ուստարվա մասին, այցելելով դպրոցի կայքէջը՝ http://www.gusd.net հասցեով: Յուրաքանչյուր դպրոց ունի իր կայքէջը կապված SARC-ի հետ: Դպրոցի գրասենյակից կարող եք ստանալ ձեր օրինակը:

## Դպրոցի հեռախոսային պատգամների ծրագիր

Մեր հեռախոսային պատգամների ծրագիրը օգնում է մեզ ժամանակին տեղեկություններ հաղորդել ծնողներին: Մենք, պարբերաբար հեռախոսային պատգամների միջոցով տեղեկացնում և հիշեցնում ենք ձեզ, դպրոցի գալիք միջոցառումների մասին: Եթե ցանկանում եք ձեզ մատչելի լեզվով հեռախոսային պատգամ ստանալ, ապա կապնվեք գրասենյակի հետ և խնդրեք, որ այն փոխվի:

## Եզակի ծրագիր աշակերտի առաջադիմության համար (SPSA)

Ջոն Մյուրի դպրոցական ծրագիրը ձևակերպվել է Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի LEA ծրագրից հետո: Խումբը կազմված է ուսուցիչներից, աշխատակազմից, ծնողներից և տնօրենից, որոնք ամեն տարի վերանայում են դպրոցի տվյալները և հաջորդ տարվա ուսումնական առարկաների համար ծրագրեր կազմում: Դպրոցական տվյալները հավաքվում և վերլուծության են ենթարկվում՝ բացահայտելու հաջողությունները և կարիքները: Ստրատեգիաներ են մշակվում այս կարիքներին հասցեագրելու և դպրոցի բարեփոխումներին և առաջընթացին թափ տալու, նաև աշակերտների առաջադիմությանը նպաստելու համար:

## Դպրոցական խորհուրդ (SSC)

Մյուրի Դպրոցական խորհուրդը բաղկացած է տասը անդամաներից՝ տնօրեն, մասանգետ ուսուցիչ , ծնողներ ընտրված՝ ծնողների կողմից և աշխատակազմ՝ ընտրված աշխատակարզմի կողմից: Դպրոցական խորհուրդը համդիպում է տարին առնվազն չորս (4) անգամ: Խորհրդի նպատակն է օգնել. զարգացնել, առաջարկել և իրականացնել «Եզակի ծրագիր աշակերտի առաջադիմության համար»-ի նպատակները: Լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք Մյուրի ուսուցիչ մասնանագետի հետ: Ժողովների հրավերները կտեղադրվեն Peachjar-ի մեջ և տուն կուղարկվեն հինգշաբթի օրվա թղթապականկով:


## Եզակի ծրագիր աշակերտի առաջադիմության համար (SPSA)

Ջոն Մյուրի դպրոցական ծրագիրը ձևակերպվել է Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի LEA ծրագրից հետո: Խումբը կազմված է ուսուցիչներից, աշխատակազմից, ծնողներից և տնօրենից, որոնք ամեն տարի վերանայում են դպրոցի տվյալները և հաջորդ տարվա ուսումնական առարկաների համար ծրագրեր կազմում: Դպրոցական տվյալները հավաքվում և վերլուծության են ենթարկվում՝ բացահայտելու հաջողությունները և կարիքները: Ստրատեգիաներ են մշակվում այս կարիքներին հասցեագրելու և դպրոցի բարեփոխումներին և առաջընթացին թափ տալու, նաև աշակերտների առաջադիմությանը նպաստելու համար


## Վեցերորդ դասարանի աշխատանքներ

*6-րդ դասարանի զվարճալի ծրագիր*

Բոլոր 6-րդ դասարանի աշակերտներին հնարավորություն է ընձեռնվում *զվարճալի* օրերի մասնակցության: Զվարճալիի օրերը տեղի են ունենալու յուրաքանչյուր եռամսյակի ավարտին կամ մոտակա օրերին:! Լրացուցիչ տեղեկություններ կկիսվեն վեցերորդ դասարանի ուսուցիչների կողմից: Այս միջոցառումներին մասնակցելու համար վեցերորդ դասարանցիները պետք է հետևեն Մյուրի-ի Դրական վարքի ակնկալիքներին Եղեք ապահով, հարգալից և պատասխանատու և միշտ ցույցադրեք ձեր հոգատարությունը:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱ (տեղեկատվություն)/ ԿԱՅՔԷՋ

Ջոն Մյուրի կայքէջը պարունակում է տեղեկություններ կրթաշրջանի և դպրոցի նորությունների, կրթաշրջանի և դպրոցական կանոնների, ծրագրերի և իրադարձությունների, ճաշի ընտրացանկի և զանգերի ժամանակացույցի վերաբերյալ:

Website: https://www.gusd.net/muir
or www.johnmuirelementary.net.
Instagram: **johnmuirgusd**
District Website: www.gusd.net

## Հատուկ ուսուցման ծրագրեր

Այն աշակերտները, որոնք ճանաչվել են հատուկ ուսուցման կարիք ունեցողներ, ծառայություններ են ստանում տարբեր ձևերով: Տեղավորումը ծրագրում կախված է լայնածավալ ստուգումների, գնահատումների, հետազոտությունների և հատուկ պատրաստություններ ունեցող մասնագետների դիտարկումների արդյունքների հիմունքներով և դրան հետևող Անհատականացված ուսուցման ծրագրի (IEP) խմբի ու ծնողների հետ ունեցած ժողովների հիմունքներով:

**Ոգեշնչման օրեր (Spirit Days)**

Աշակերտական խորհուրդը, աշակերտների համար տարվա մասնակի օրեր է նշանակում: Օրինակի՝ աշակերտները կանաչ գույնի հագուստ են հագնում Saint Patrick-ի օրվա առթիվ: Ոգեշնչման օրերը հայտարարվում են, նաև տեղեկացվում՝ հինգշաբթի օրվա թղթապանակի միջոցով: Ամեն ուրբաթ Ոգեշնչման օր է: Աշակերտները կարող են հագնել Մյուրի շապիկ իրենց համազգեստի տաբատով: Մյուրի շապիկները վաճառվում են գլխավոր գրասենյակում: Շապիկն արժե $800 կամ 2 վերնաշապիկն արժե $15.00:

## Աշակերտական խորհուրդ

Մյուրը հպարտ է իր Աշակերտական խորհրդով, որը 4-6-րդ դասարանների ներկայացուցիչներից է բաղկացած: Աշակերտական խորհրդի ժողովները կայանում են ամեն ամիս և հնարավորություն ընձեռնում աշակերտներին ղեկավարման փորձառություն ձեռքբերել, պատասխանատվություն սովորել, նպաստել դպրոցի ոգեշնչմանը և օգնել դպրոցի բարելավման աշխատանքներին:

## Ուշացումներ

Դարպասները կողպվում են առավոտյան 8:10-ին: Այն աշակերտները, ովքեր 8:15-ից հետո գալիս են առջևի դռնից, գրանցվելու են որպես ուշացած՝ կախված նրանց ժամանման պահից: Ժամանակին դպրոց հաճախելը առաջնահերթություն է Մյուրում: Աշակերտները, ովքեր ուշ են ժամանում, նախքան դասարան գնալը պետք է գրանցվեն դպրոցի գրասենյակում: Աշակերտները երկտող տուն կտանեն, որպեսզի ծնողները լրացնեն նշելով, թե ինչու է աշակերտը ուշացել: Բոլոր ուշացումներն արձանագրվում են հաճախումների գրանցամատյանում: Եթե ուշացումները լուրջ խնդիր դառնան, ապա դպրոցի ղեկավարությունը կկապվի ծնողների հետ: Կրթաշրջանի Աշակերտների աջակցության ծառայության գրասենյակը իրավունք ունի իրականացնել առավոտյան արթնացնող զանգերի համակարգը՝ աշակերտներին օգնելու ժամանակին դպրոց հասնելու:

## Հեռախոսներ

Աշակերտներին իրավունք չի տրվում դպրոցական օրվա ընթացքում հեռախոս գործածել, բացառությամբ՝ արտակարգ իրավիճակները: Մոռացված տնային աշխատանքը, երաժշտական գործիքը, մարզանքի առարկաները, ճաշը կամ ճաշի դրամը արտակարգ իրավիրճակներ ՉԵՆ համարվում: Այս կանոնները կարևոր են աշակերտին պատասխանատվություն սովորեցնելու և վստահանալու, որ դպրոցի հեռախոսային կապի գիծը պետք է բաց պահել, դրսից եկած շտապ զանգերի համար:

## Հեռախոսային պատգամներ

Եթե ձեր երեխայի ուսուցչի հետ խոսելու կարիք կա, ապա խնդրվում է, որ ձեր երեխայի հետ գրություն ուղարկեք ուսուցչին, որպեսզի ձեզ զանգահարի: Խնդրվում է գրանցել ձեր աշխատանքային և տնային հեռախոսահամարները և լավագույն ժամանակամիջոցը, որի ընթացքում ուսուցիչը կարող է ձեզ զանգահարել: Եթե երկու (2) օրվա ընթացքում դուք ուսուցչից պատասխան հեռախոսազանգ չեք ստացել, խնդրվում է նորից զանգահարել նրան: Միայն արտակարգ իրավիճակների պարագաներում աշակերտներին կթույլատրվի խոսել իրենց ծնողների հետ: *Դասավանդումները չեն խանգարվի հեռախոսային պատգամների պատճառով: Խնդրվում է տեղեկանալ, որ ժամը 12:30-ից հետո թողնված*

*<u>հեռախոսային պատգամների ընթացք չի տրվի մինչև դպրոցական օրվա վերջը:</u>*

**<u>Քննություններ</u>**
*<u>Անգլերեն լեզվի հմտության գնահատում</u>*
Սկսած 2017-2018 ուստարվանից, Կալիֆորնիայի Անգլերեն լեզվի հմտության տարեկան գնահատումը (ELPAC) կփոխարինի Կալիֆորնիայի անգլերեն լեզվի զարգացման քննությանը (CELDT), որպես՝ մանկապարտեզից-12-րդ դասարանների Կալիֆորնիայի անգլերեն լեզվի հմտության գնահատում: 2017-2018 ուստարվա ընթացքում և մինչև 2018 թվականի հունիսի 30-ը CELDTA-ը կտրվի ծանոթացնելու նպատակով: 2018 թվականի գարնանը ELPAC-ի ամփոփված գնահատումը կօգտագործվի որպես քննություն, անգլերեն սովորողների համար: 2018-19 ուսումնական տարվա ընթացքում ELPAC-ը կլինի միակ առաջին և ամփոփ քննությունը և CELDTA-ը այլևս չի գործածվի:

<u>CAASPP *(Կալիֆորնիայի գնահատում աշակերտի կատարման և առաջադիմության համար)*</u>
*Կալիֆորնիայի գնահատում աշակերտի կատարման և առաջադիմության համար* (CAASPP) քննությունը փոխարինել է Կալիֆորինայի ստանդարտներով քննությանը (CST):
CAASPP-ը համակարգչով կարգավորվող Անգլերեն լեզվարվեստի և մաթեմատիկայի քննություն է 3-ից մինչև 11-րդ դասարանների համար: Կատարողական հանձնարարությունը ընգրկված է քննության մեջ, ստուգելու աշակերտի իմացության գործածությունը՝ անգլերեն լեզվարվեստի և կյանքի առօրիայի հետ կապակցված մաթեմատիկայի խնդիրներին լուծումներ գտնելու համար: Քնությունները անցկացվում են ապրիլ և մայիս ամսին, ամեն տարի:

**<u>Դասագրքեր</u>**
Բոլոր աշակերտներին դասագրքեր են տրվում: Աշակերտի պատասխանատվությունն է ուշադիր և խնամքով վարվել բոլոր դասագրքերի հետ, և եթե հնարավոր է գրքերը ստանալուն պես դրանք կազմապատել: Կորած և վնասված դասագրքերը կփոխարինվեն աշակերտի ծախսով:

**<u>Հինգշաբթի օրվա թղթապանակներ</u>**
Կանոնավոր հաղորդակցությունները ծնողների հետ կարևոր են վստահանալու, որ ծնողները տեղեկացած են դպրոցում կատարվող իրադարձությունների մասին: Գրավոր տեղեկությունները, հիշեցումները և այլ հաղորդակցությունները բաժանվում են հինգշաբթի օրվա թղթապանակով, որը պետք է դպրոց վերադարձվի հաջորդ օրը:
Համոզվեք, որ ձեր էլ. փոստի կապի հասցեն թարմացվում է առցանց համակարգում, որպեսզի ստանաք Peachjar գրառումների ծանուցումներ: Խնդրում ենք օգնության համար դիմել դպրոցի գրասենյակ:

**<u>Երթևեկության գոտի</u>**
*Երթևեկության ճանապարհագիծը ստեղծվել է մեր երեխաների ապահովության համար, նրանց իջեցնելու և վերցնելու ժամանակամիջոցին: Եթե դուք ավտոմեքենայով եք ձեր երեխային բերում կամ վերցնում, ապա խնդրվում է,* Acacia փողոցի *երթևեկության գոտին գործածել:* ***<u>Գարֆիլդը ապահով վայր չէ ձեր երեխային իջեցնելու համար:</u>***

**ԻՆՉՊԵՍ Է ԴԱ ԳՈՐԾՈՒՄ**

- Կանաչ երթևեկության կոները կդրվեն Acacia-ի երթևեկության գոտու երկայնքով: Դա <u>ԿԱՆԳԱՌԻ ՏԱՐԱԾՔ ՉԷ</u> առավոտյան ժամը՝ 7:30-8:15 և կեսօրից հետո 2:20-3:00 է:
- Առավոտյան իջացնելու ժամը՝ 7:30-8:10 միջև է: Բոլոր աշակերտները պետք է դպրոցում և շարքի մեջ լինեն 8:10-ին, երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերին և 9:10-ին՝ չորեքշաբթի օրերին: Դարպասը <u>կփակվի</u> 8:10/9:10:
- Առավոտյան, իրենց երեխաներին իջեցնելու համար, ծնողները կմտնեն նշանակված գոտի և երեխային կիջեցնեն հնարավորին չափ շուտ: Ապա, ծնողները, կհետևեն երթևեկության հոսանքին:
- Դասաժամերից հետո վերցնելու ժամը կեսօրից հետո ժամը 2:20-3:00-ն է:
- Դասաժամերից հետո, ծնողները կմտնեն նշանակված գոտի իրենց երեխաներին վերցնելու համար: (1-3-րդդասարաններ ժամը 2:20-ին, 4-6-րդ դասարաններ ժամը 2:40-ին:)
- Աշակերտները կսպասեն ցանկապատի մոտ: Ծնողները **<u>ՊԵՏՔ Է</u>** իրենց մեքենան վարեն ցանկապատի մոտ երեխային վերցնելու համար:
- Եթե ձեր երեխան չի սպասում ցանկապատի մոտ, մեքենան վարեք բլոկի շուրջը և ետ վերադարցրեք ու նորից փորձեք:
- Երթևեկության գոտու օգնականը կօգնի աշակերտներին ավտոմեքենայից իջնելիս և նստելիս:
- Անձրևոտ օրերին ձեր երեխային անջրանցիկ անձրևանոցով ապահովեք, որպեսզի նրանք գոտում սպասելիս չթրջվեն:

**<u>Բողոքի համընդհանուր ընթացակարգ (UCP)</u>**
Համընդհանուր բողոքարկման գործընթացի ներքո գրված և ստորագրված բողոքագիրը է՝ անձի, հանրային գործակալության կամ կազմակերպության կողմից, որը ներկայացնում է դաշնային, նահանգային ուսումնական ծրագրի օրենքի է խախտումը: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի ուսումնական վարչակազմը խրախուսում է վաղ, ոչ պաշտոնական բողոքի լուծում, համապատասխան և հնարավորության սահմաններում: GUSD-ի վարչական խորհուրդը որդեգրել է, **<u>Բողոքի համընդհանուր ընթացակարգ (UCP),</u>** որը կարելի է գտնել Մյուրի կայքէջում [www.johnmuirelementry.net](http://www.johnmuirelementry.net) *Site Shortcuts-ի ներքո:*

**<u>Համազգեստի և զգեստավորման համրնդհանուր կանոններ</u>**
Ջոն Մյուրի ուսուցչական կազմը, աշխատակազմը և վարչակազմը նվիրված են դրական ուսումնական միջավայր ստեղծելու գործին, մեր բոլոր աշակերտների համար: Գեղեցիկ հարդարանքը նշանակալից է դարձնում բնավորության տարբերությունը և ճգտումը, որը բնորոշ է Ջոն Մյուրի աշակերտին: Դպրոցը աշակերտի աշխատավայրն է և մենք ցանկանում ենք, որ մեր աշակերտների զգեստավորումը արտացոլի մեր դպրոցի մասնագիտական հատկանիշը: Հետևաբար, բոլոր հագուստները պետք է լինեն կոկիկ, մաքուր և ընդունելի: **ԲՈԼՈՐ** աշակերտները ՊԵՏՔ Է պահպանեն հետևյալ համազգեստի և զգեստավորման կանոնները.

1. Պարզ ճերմակ, մուգ կապույտ կամ Մյուրի կարճ թևերով վերնաշապիկ և մուգ կապույտ, սև կամ դենիմ (շալվարներ, կարճ շալվարներ, կիսազգեստ կամ jumpers):

2. Սանդալներ կամ մատները բաց, պլատֆորմով կոշիկներ կամ skate shoes չի թույլատրվում: Որևէ կոշկի կրունկ չպետք է (1) ինչից բարձր լինի: Կոշիկի երկար կապերը պետք է կապված լինեն, որպեսի կրունկները կոշիկների միջից դուրս չսահեն: Բոլոր կոշիկների կրուկները փակ պետք է լինեն:
3. Շալվարների, կարճ շալվարների, կամ սպորտային շալվարների փեշերը կտրատած չլինեն:
4. Հրոսակախմբերի (gang related) պատկանող հագուստների որևէ տեսակ չի թույլատրվում:
5. Շալվարներ, կարճ շալվարներ, կամ սպորտային շալվարներ, որոնք աշակերտի գոտկատեղից երկու (2) ինչից ավելի լայն են, չեն թույլատրվում:
6. Շալվարներ չափազանց լայն՝ հինգ (5) ինչից ավելի, ծնկների կամ կոճի մասում կախված ավելորդ կտորներով չի թույլատրվում:
7. Անվան սկզբնատառերով գոտու ճարմանդներ (belt buckles) չեն թույլատրվում:
8. Սպորտային բանկոն, կապերով վերնաշապիկներ (halter-tops), crop tops, կամ վերնաշապիկներ շատ բարակ ուսաժապավեններով չեն թույլատրվում:
9. Ստոծանին բաց վերնաշապիկներ չեն թույլատրվում: Վերնաշապիկը պետք է փակի ստոծանին նույնիսկ ձեռքերը վեր բարձրացնելիս:
10. Չեն թույլատրվում վատ մտքեր խթանող տհաճ հագուստեղենը, ներառյալ նշանաբաններով հագուստները, որոնք ալկոհոլի, թմրադեղերի, սեքսուալ ոճի, սիգարետի, ռասիզմի կամ վայրագության նկարներով են ներկայացված:
11. Չկրել երկար, կախված ականջի օղեր, որոնք վտանգավոր կարող են դառնալ մարմնամարզության, ընդմիջման կամ ճաշի ընթացքում:
12. Շղթաներ կրել կամ մոտը պահել չի թույլատրվում:
13. Չի թույլատրվում հագնել հագուստներ, որոնք կխանգարեն դասարանի բնական հոսքը կամ կխանգարեն դպրոցական միջոցառումները:

Եթե աշակերտը խախտի համազգեստի /զգեստավորման կանոնները, ծնողները կտեղեկացվեն և աշակերտը կարող է գրասենյակից հագուստ փոխառնել և այն հագնել, կամ ծնողները պետք է տանից համապատասխան հագուստ բերեն: Համազգեստից հարաժարվելու խնդրագիր կարելի է ստանալ դպրոցի վարչակազմից:

### Այցելուներ և կամավորներ

Բոլոր այցելողները և կամավորները դպրոց ժամանելուն պես պետք է ներկայանան դպրոցի գրասենյակ, 7:30-4:00 ժամերի ընթացքում: Այցելողները անցման թույլատրություն պետք է ստանան և այն պարզորեն ցուցադրեն հագուստի վրա և կրեն դպրոցում եղած ժամանակմիջոցին: Խնդրվում է ժամադրություն վերցնել ուսուցչի և տնօրեն հետ քսան (20) րոպե հանդիպում ունենալու համար: Այցելողները կուղեկցվեն աշխատակազմի կողմից ձեր դիտարկումների և այցելությունների ընթացքում: Մյուրը խրախուսում է կամավորներին, ակտիվորեն մաս կազմել դպրոցական աշխատանքներին: Կամավորները օգնում են դասարաններում, գրադարանում, համակարգիչների լաբորատորիայում և աշակերտների հետ աշխաատանքներ տանում: Այն ծնողները, որոնք կանոնավոր կերպով կամավոր աշխատանքեր են տանում պետք է գրասենյակ ներկայացնեն TB քննության (թոքախտի համար մաշկի քննություն) ապացույցը և ժամադրություն վերցնեն ուսուցչի հետ:

## ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական խորհուրդը և Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը պարտավորվում են բարեկեցության քաղաքականությամբ խթանել սննդառու, ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Մենք հավատում ենք, որ անհրաժեշտ է՝ դրական, անվտանգ և առողջությունը խթանող ուսումնական միջավայրը, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան ձեռք բերել անձնական զարգացում, ուսումնական առաջադիմություն, և սոցիալական հաջողություններ: Ուսումնական խորհուրդը և GUSD-ն վստահեն են, որ ուսուցիչների, աշխատակազմի և համայնքի ներգրավվածությունը՝ առողջությունը խթանումը, ուսումնական միջավայրը և բարեկեցության փորձառությունները անհրաժեշտ են համապարփակ և համագործակցային բարեկեցության համար: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել GUSD AR5030 կայքը:

Մենք չենք ընդունելու սննդամթերք, ինչպիսիք են cupcakes կամ բլիթները, աշակերտի ծննդյան օրը նշելու համար: Փոխարենը, ծնողներին խրախուսվում է նվիրել համապատասխան իրեր, ինչպիսիք են՝ մատիտները, գրքերը և պիտակները կամ ձեր ժամանակը դասարանում: Խնդրում ենք ստուգեք ձեր երեխայի ուսուցչի հեր հատուկ կարիքների համար: Ոչ մի սննդի կամ խաղալիքների իրեր (cupcakes, բլիթներ, քաղցրավենիք, տոպրակներ) չի թույլատրվում:

### Դեղին ժապավենի շաբաթ

Սա մեկ շաբաթ տևող միջոցառում է հունվար ամսվա ընթացքում, որի ընթացքում աշակերտները և աշխատակազմը քննարկում են դնում հանդուրժողականության և հակաբռնությունների կարևորությունը Ջոն Մյուր է դպրոցում, ուր աշակերտներին խրախուսվում հոգատարություն ցուցաբերել տանը և դպրոցում:

ՄՅՈՒՐ ՄԱՍՏԱՆԳԻ ՎԱՐՔԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

| Վայրը | ԱՆՎՏԱՆԳ ԵՂԵՔ | ՀԱՐԳԱԼԻՑ ԵՂԵՔ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՂԵՔ | ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՑՈՒՅԱԲԵՔ |
|---|---|---|---|---|
| ԺԱՄԱՆՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԿՄԱՆ ՏԱՐԱԾՔ | Մայթի վրայով քայլեք և անցումները գործածեք:<br>Հանգիստ քայլեք:<br>Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք:<br>Սպասեք նշանակված վայրում: | Ուշադիր լսեք:<br>Սպասեք ձեր հերթին:<br>Հետևեք ղեկավարի ցուցումներին: | Շարունակեք ձեր քայլերը և դպրոցից տուն գնացեք: | Ժամանակին եկեք և տուն գնացեք:<br>Համբերատար եղեք:<br>Ձեռքի շարժումով ցտեսություն ասեք: |
| ԴԱՀԼԻՃՈՒՄ | Հանգիստ քայլեք:<br>Համեստորեն նստեք:<br>Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք: | Ուշադիր լսեք և հետևեք կանոններին:<br>Անաղմուկ մտեք դպրոց և անաղմուկ գնացեք: | Մնացեք ձեր տեղում: | Հանդիսատեսին վայել պահվածք ցուցաբերեք:<br>Ծափահարեք, երբ հարկն է:<br>Մասնակից դարձեք: |
| ՃԱՇԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՃԱՇԱՎԱՅՐՈՒՄ ՏԱՐՏՏՏԼԻՆՉԷ ՍԷԸԼՏԸՐ | Հանգիստ քայլեք:<br>Երկու ձեռքով բռնեք ձեր սկուտեղը:<br>Ձեր շարքում մնացեք:<br>Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք: | Սպասեք ձեր հերթին:<br>Ճաշասեղանի մոտ բարեկիթ եղեք:<br>Հետևեք ճաշարանի ղեկավարի ցուցումներին:<br>Սպասեք թույլտվության, ապա հեռացեք | Մնացեք ձեր տեղում մինչև արձակման հրաման տրվի:<br>Անմիջապես հայտնեք խնդիրները:<br>Վերցրեք ձեր սպասքը:<br>Մաքրեք ձեր տարածքը:<br>Վերցրեք միայն ինչ որ ուտելու եք:<br>Կերեք ձեր բերած ճաշը: | Թույլատրեք, որ մեկ ուրիշը նստի ձեր կողքին:<br>Բարեկամաբար զրուցեք:<br>Ցածր ձայնով խոսեք: |
| ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԼԱԲ. | Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք:<br>Հանգիստ քայլեք:<br>Ձեր տեղում նստեք:<br>Ձեռքերը հեռու պահեք էլեկտրալարերից: | Ցածր ձայնով խոսեք:<br>Սպասեք ձեր հերթին:<br>Ձեռք բարձրացրեք և սպասեք թույլտվության: | Պատշաճորեն օգտվեք տեխնոլոգիայից:<br>Դուրս եկեք համակարգչի բոլոր ծրագրերից, երբ վերջացրել եք գործը: | Ժամանակին եկեք և ժամանակին հեռացեք դասարանից:<br>Համբերատար եղեք: |
| ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ | Հանգիստ քայլեք:<br>Քայլեք աջ կողմից և առաջ նայեք:<br>Հետևեք ձեր դասարանի շարքին:<br>Ուշադրություն դարձրեք բացվող դռներին:<br>Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք: | Արագ և անաղմուկ գնացեք ձեր նշանակավայրը: | Վերադարձրեք կորած առարկաները:<br>Արտոնագիր օգտագործեք, երբ ձեր դասարանի հետ չեք:<br>Միջանցքները ազատ պահեք:<br>Ամենակարճ ճանապարհով գնացեք: | Ժպտացեք:<br>Գնահատեք ցուցատախտակին փակցրած աշխատանքը:<br>Անցորդներին ճանապարհ տվեք: |
| ԳՐԱԴԱՐԱՆ | Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք:<br>Հանգիստ քայլեք: | Ցածր ձայնով խոսեք:<br>Սպասեք ձեր հերթին: | Խնամքով վերաբերվեք գրքերի հետ:<br>Խնամքով վերաբերվեք դարակների նշիչների հետ:<br>Ժամանակին վերադարձրեք գիրքը:<br>Խնամքով վերաբերվեք գրքերի հետ: | Ժամանակին եկեք և ժամանակին գնացեք գրադարանից:<br>Համբերատար եղեք: |
| ՇԱՐՔԱԳԾԻ ՏԱՐԱԾՔ | Ձեր շարքի մեջ մնացեք:<br>Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք: | Հետևեք ցուցումներին և հայտարարություններին:<br>Հարգանքով խոսեք բոլորի հետ: | Շարք կանգնեք, երբ զանգը հնչի:<br>Շարքում ձեր տեղը զբաղեցրեք: | Ողջունեք բոլորին:<br>Ժպտացեք: |
| ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՏԱՐԱԾՔ | Հանգիստ քայլեք:<br>Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք: | Անաղմուկ մտեք և ցածր ձայնով խոսեք:<br>Լսեք չափահասներին:<br>Սպասեք ձեր հերթին: | Արտոնագիր օգտագործեք: | Օգտակար եղեք:<br>Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք:<br>Ժպտացեք:<br>Դուռը բռնեք ուրիշների համար: |
| **ԽԱՂԱԴԱՇՏՈՒՄ** | Ձեռքերն, ոտքերը և իրերը ձեզ պահեք:<br>Խաղասարքերի հետ խնամքով վարվեք:<br>Քայլելով գնացեք խաղադաշտ և վերադարձեք:<br>Վազեք միայն վազքի տարածքում: | Միասին խաղացեք խաղասարքերով:<br>Սպասեք ձեր հերթին: Պահպանեք խաղի կանոնները:<br>Ընթացքի մեջ եղող խաղերի կողքով քայլեք:<br>Հարգանքով խոսեք բոլորի հետ: | Դադարեցրեք խաղ, երբ ավարտի զանգը հնչի:<br>Շարք կանգնեք, երբ զանգը հնչի:<br>Վերադարձրեք գնդակները:<br>Գնդակը փոխանցեք: | Մասնակից դարձեք բոլորին:<br>Ուշադիր եղեք ձեր շրջապատի հանդեպ:<br>Օգնեք կարիքավորներին:<br>Դրական վերաբերմունք ցուցաբերեք:<br>Բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեք: |
| **ԶՈՒԳԱՐԱՆՈՒՄ** | Հանգիստ քայլեք:<br>Ջուրը լվացարանի մեջ պահեք:<br>Ձեռքերը լվացրեք:<br>Ձեռքերն և ոտքերը ձեզ պահեք: | Ցածր ձայնով խոսեք:<br>Նախքան անձնական բաժանմունք մտնելը դուռը թակեք:<br>Հարգեք անձի առանձնությունը:<br>Սպասեք ձեր հերթին:<br>Դրսում զրուցեք:<br>Օգտագործելուց հետո ջուրը քաշեք: | Արտոնագիր օգտագործեք:<br>Մաքուր պահեք ձեր օգտագործած տարածքը:<br>Պատշաճորեն օգտագործեք լվացարանը և զուգարանը:<br>Պատշաճորեն մտեք և դուրս եկեք զուգարանից: | Օգտակար եղեք:<br>Ձեր մտահոգությունը հայտնեք չափահասներին:<br>Թուղթը մի վատնեք:<br>Անցորդներին ճանապարհ տվեք: |
| ԱՍՏԻՃԱՆՆԵՐ | Հանգիստ քայլեք:<br>Ամբարձողիկից բռնվեք:<br>Քայլ առ քայլ առաջ շարժվեք:<br>Հետևեք ձեր քայլերին և ճանապարհին: | Անաղմուկ քայլեք: | Օրինակելի աշակերտ եղեք:<br>Արագ նշանակված վայր գնացեք: | Անցորդներին ճանապարհ տվեք: |